

ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆ



ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՆԻՍՏ ԱԶԳ. ԺՈՂՈՎՈՅ

Տ.

Ազգային Ընդհանուր Ժողովը բացառիկ նիստ պիտի զումարէ յառաջիկայ Աւրքար, 11 Հոկտեմբեր, ժամը 3ին (Ը. Ե.) ի Մայր Եկեղեցի, միակ Օռակարգ ունենալով

ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՌԱՅՈՒՄ ԳՐՈՅ ԳԻՒՏԻ

ԵՒՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՑՈՅԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՆԵՐՈՒ

Կը խնդրենք ու հանիք կատարել Ձեր ազգափրական պարտականութիւնը:

ՄՆԱՄՔ ԱՂՕԹԱՐԱՐ

ՊԱՏՐԻԱՐքական ՏԵՂԱՊԱՀ

ԳԱԲՐԻԵԼ ԵՊՈՎ. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ

* * * Միացեալ Ընկերութեանց բոլոր անդամները կը հրաւիրուին դիմել ընկերութեան գրասենեակը, մինչեւ յառաջիկայ ուրբաթ (11/24 հոկտ.) երեկոյ և ստանալ յորելեանի առթիւ յատկապէս պատրաստուած ժապաւէն մը յորելեանական հանդիսութեանց ատեն կեղրոնական Յորելեանական Յանձնաժողովի պատրաստած քօքարտին հետ միասին կրելու համար։ Ժապաւէնները ձրիաբար կը տրուին։ Շաբաթ օր Միացեալ Ընկերութեանց գրասենեակը գոց է։

ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ՄԷԶ

Պանտրմայի մէջ գիրերու գիւտին 1500ամեակի և հայ տպագրութեան 400ամեակին առթիւ շքեղ հանդէս մը տեղի պիտի ունենայ։

Այս առթիւ կարդադիր Յանձնաժողով մը կազմուած է 12 անձնաւորութիւններէ բաղկացեալ, որոնք պատրաստ են ամէն ջանք ու ճիգ թափելու հանդէսը իր նպատակին բարձրութեան համաձայն տօնելու համար։ Հանդէսը տեղի պիտի ունենայ փոխանակ ամսոյս 13ին՝ 20ին, նախապատրաստութիւնները անթերի կերպով կատարելու համար։

Կրթական Ֆօնտին սատարելու համար տեղւոյս Հայ հասարակութեան մէջ հանգանակութիւն կատարուելէ զատ, Սահակայ և Մեսրոպայ մեծադիր պատկերները աճուրդի պիտի դրուին։

Վերջապէս Յանձնաժողովոյ կողմանէ ամէն ջանք չպիտի զյացուի տեղւոյս Հայ համայնքին պատիւ բերելու չափով հասոյթ մը գոյացնելու համար։

ԹՂԹԱԿԻՑ